ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՐՄՈՆՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լերմոնտովո համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Լերմոնտովո, (0322)68570, lermontovo.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 ՄԱՐՏԻ 2023թվականի N 25

ՎԻԼԵՆ ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՏՆԱՄԵՐՁ ԱՅԳԵԳՈՐԾԱԿԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ՀՈՂՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ, ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՁԵՎԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 22-րդ կետով, 43-րդ հոդվածով, ՀՀ ՀՕ 64-րդ հոդվածի 2-րդ, 8-րդ և 16-րդ կետերով, ՀՀ կառավարության 29.12.2005 թ-ի թիվ 2387-Ն որոշումով, "Նորմատիվ իրավական ակտերի մասին" ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով, հաշվի առնելով "Կաթնագործ" այգեգործական ընկերության կողմից Վիլեն Պետրոսյանին տրված այգեգործի վկայականը, Վիլեն Պետրոսյանի դիմումը սեփականության իրավունքը ձևակերպելու մասին և, քանի որ հողամասը ընդգրկված չէ ՀՀ ՀՕ 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում և չի առաջացնում սերվիտուտ

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.0,06հա հատկացված հողամասի նկատմամբ վերականգնել և ճանաչել Վիլեն Պետրոսյանի սեփականության իրավունքը, իսկ հատկացվածից ավել զբաղեցրած 0,00281հա հողամասի նկատմամբ օրենքի ուժով ճանաչել նրա սեփականություն: Այգեգործի վկայականում նշված հինգ անձիք հանդիսանում են սեփականատիրոջ ընտանիքի անդամներ:

2.Սույն որոշումից ծագող իրավունքները և պարտականությունները ենթակա են պետական գրանցման ՀՀ ԱԳԿՊԿ-ի Լոռու մարզային ստորաբաժանումում:

3.Ուժը կորցրած ճանաչել Լերմոնտովո համայնքի ղեկավարի 09.01.2023 թ-ի թիվ 02 որոշումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԷԴԻԿ ՉԱԽԱԼՅԱՆ**